

Դ. ՄԱՍ

- 1.— 1915 ազգային աղէտը,
աքսոր, կողոպուտ,
կազմակերպուած ջարդեր:
- 2.— Վկայութիւններ,
յուշեր ականատեսի,
պատմումներ վերապրողներէն:
- 3.— Դիմադրական փորձեր,
զինուած ընդհարումներ,
կիւրինցի կամաւորներ:
Գաղթակայաններու
եւ մոայլ քէմբերու մէջ
փրկուած բեկորներ:

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԻՄԱՔՍԵԱՆ (1864—1915)



Խորեն Եպսկ. Դիմաքսեան կը կոչուէր թորոս Այլողանեան: Հայրը Օ-
Հան Այլողանեան հովիւ էր, պարզունակ, աւանդապահ նկարագրով՝ աշխատա-
սէր ժարդ մը: Հակառակ իր գրել կարդալ չդիտնալուն, միշտ փափաքած եւ
ձղուած էր, որ իր զաւակը ըլլայ ուսեալ ու կըթուած մարդ: Ոչինչ խնայած էր
տղուն ուսման դոհացութ տալու համար: Առակի կարգ անցած էր եւ իբրեւ բա-
րոյական չափանիշ, օրինակ, կը յիշուէր դպրոցներու մէջ, թէ «Օհան կմմին իր

մէկ հատիկ հառանին (կաթսան) ծախած է, իր զաւկին գպըոցի դասադիրքերը զնելու համար»: Այս տեղի ունեցած է կիւրինի մէջ, Թերզեանի ուսուցչութեան շրջանին:

Երբ Թէրզեան Սիսի կաթողիկոսական ժառանգաւորաց վարժարանին տնօրէն կարգուեցաւ, կիլիկու Տ. Տ. Մկրտիչ կաթողիկոս Թէրփսիղեանի կիւրին այցելութեան օրերուն, Թորոս Հոն ընդունուեցաւ Թէրզեանի ուղղակի միջնորդութեամբ, ինչպէս նաև Գեղամ Էնթիքանեանը, որ յետազային աշխարհական մնաց, իսկ Թորոս Այլողանեան ընդունելով կուսակրօնութիւնը՝ մկրտուեցաւ Խորէն վարդապէտ Դիմաքսեան:

Խորէն Սրբազն իր ցոյց տուած վարչական հմտութեան եւ կարողութեան չնորդիւ, գեռ երիտասարդ լայց կորովամիտ վարդապետ, նղած է Մերսին, իրեւ առաջնորդական փոխանորդ եւ քարոզիչ հայաստանեայց եկեղեցւոյ: Անհատականութիւն եւ ապահովուած վարկ ունեցող Եկեղեցական մըն էր արդէն, երբ առաջին անդամ Եռզզատի Առաջնորդ կարգուեցաւ: Խիստ օգտակար պաշտօնավարութիւն մը ունենալով Հոն, սիրուեցաւ բոլորէն անխօրտիր: Յետոյ արագօրէն եպիսկոպոսական աստիճանի բարձրացաւ իր յայտնաբերած հասարակական ազգային գործերու նուրբումին, ողջախոհութեան եւ կարողութիւններուն չնորդիւ:

Իր ծննդավայրը եղող կիւրինի Առաջնորդական Աթոռը Բափուր ըլլալով զինք հրաւիրեցին կիւրին իրը Առաջնորդ: Խորէն Եպօկ: Դիմաքսեան իր մայրէնի Եկեղեցիին ու ժողովուրդին կարօտը սրտին մէջ, եկաւ կիւրին: Իր պաշտօնավարութեան շրջանը եղաւ իրապէս բնորուն, կրթական, ազդային-եկեղեցական կեանքին ներս վերազարթնումի աշխուժ լրջան մը բանալով:

Ան հաւասարապէս սիրուած էր բոլոր կիւրինցիններէն, նոյնիսկ հակառակ աւետարանի այն ասացուածքին, որ կը չեւտէ թէ՝ «Մարգարն ի գաւառի իրավունք ոչ ունի պատիւ»:

Ունէր անկորնչելի հազրութականութիւնն մը: Իր նայուածքին, շարժումին եւ բաւերուն մէջ, ինչպէս նաև իր յարաբերութիւններուն եւ գործերուն ընթացքին, միշտ տիրապետողը անկեղծութիւնն էր: Արագ էր եւ վճռական հանրային աշխատանքներու իրազործումին մէջ:

Վարչագէտ էր — իր կարողութիւնը կը բխէր անկողմնակալ եւ պարակելու ողիէն: իրատեսութեամբ, լրջօրէն կը նշմարէր եւ կը քննէր դէպքերը, առանց դոյզն նախասիրութեան եւ փառասիրութեան, կունկնդրէր մարդիկն ու ինդրանքները, պահանջները: Միշտ բարի եւ միշտ արի ջանքերով կը մեղմացնէր եւ կը հաշտեցնէր ընդդիմադիր, յաճախ հակագիր տարրերու կիրքերն ու վէճերը:

Եինարար էր — կարճ շրջանի մը ընթացքին յաջողեցաւ ազգային գերեզմանատան պարիսպը բարձրացնէլ եւ ինքն էր նաև առաջնորդարանի եւ ազգապատկան տուններու շինութեան առաջին հիմնադիրը: Իր մօտ ազգային արժանապատութիւնը կը միանար լինարար, գործօն նկարադրին և կը փորձէր զայն տեսնել, ժողովուրդի վերականգնումին եւ ինքնապիտակցութեան մէջ:

Կրթասէր էր — իր բուլոր ճիգերը կեղործնացուցած էր Ազդ: վարժարանի եւ միւս վարժարաններու բարեկարդութեան չուրջ: Յաջողած էր արդէն զայն հասցնել նախանձելի վիճակի մը: Երբեք չէր զատուեր գպըոցէն, իր պարապոյ ժամերը կ'անցընէր Հոն, դասեր աւանդելով, ունկնդրելով եւ քաջալերելով: Նախանձախնդիր էր ուսուցչաց թոշակներուն օրը օրին վճարման: Հո-

զարարձութեան նիւթական հողը մեծ մասով կը բաժնէր ինքը, գոհ թողելու համար զասատունեցը։ Իր օրով անտեսուած մարդիկ չեին կրթական մշակ-ները։

Քարոզիչ էր՝ բարձր, ինքնայտուկ վեհութիւն մը ունէին իր քարոզ-ները։ Սորվեցնելու համար կը խօսէր, ժողովուրդին հասկցած պարզ լիզուով, շատ զեկեցիկ առակներով։ Հետաքրքրական էր իրապէս իր պատմելու եղանակը։

Թրքական վաճառալիգիքը արիւնի մէջ խեղդեց լիբրազարթնումի եւ շինարարութեան այս առողջ, հանրօգուտ աշխատանքները : 1915ի քաղաքական դէպքերը ծանօթ են բոլորին : Բոլոր զաւառներու մէջ նոյն ջարդարար դործելակերպն էր, իր բոլոր զարդարութիւններով :

Խորէն Եպիսկոպոս Դիմաքսեան, շատ շատերու նման նահատակուեցաւ Համաշխարհային առաջին պատերազմի սկզբնական ըրջանին։ Մեր եկեղեցական պատմութիսոն մէջ, ան պիտի մնայ վստահօրէն և ապրի անհատականութիւն ունեցած շատ մը եկեղեցական դէմքերու կոռզին։

ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐԱԿՑՈՒՅԹ

1915 Տարի 21
Ապրիլ 11 Կողման 1915

Op enige dag

S. S. Zorn, f. d. U. Uffgymn. & Gymnas.
Königl. Gymn. Gymnas. Augs. 1877
U. Berl.

1. 1977-1978 гг. в Краснодарском крае
все же не было никаких
затруднений с получением
документов на земельные участки.
Все земли были предоставлены
в аренду на 15 лет. Всего было
получено 16 земельных участков
и 15 земельных участков
в аренду. Всего было предоставлено 31 земельный участок.
Все земли были предоставлены
в аренду на 15 лет. Всего было предоставлено 16 земельных участков
и 15 земельных участков
в аренду. Всего было предоставлено 31 земельный участок.
Все земли были предоставлены
в аренду на 15 лет. Всего было предоставлено 16 земельных участков
и 15 земельных участков
в аренду. Всего было предоставлено 31 земельный участок.

Իր վերջին նամակներէն մէկը... հաւանաբար: